



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀՀ ՓԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԻՐԱՎԱՔԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ  
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Գայանե Դեմիրջյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Լիլիթ Ղազանջյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի և Մարինե Ֆարմանյանի,

հաշվի առնելով «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. (ՀՕ-366-Ն) օրենքով (**այսուհետ՝ Օրենք**) կատարված փոփոխությունները,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Օրենքի ուժով առաջացել է ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների (**այսուհետ՝ նաև Որակավորման հանձնաժողով**) իրավաբան-գիտնական անդամների մրցույթ հայտարարելու անհրաժեշտություն,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) կանոնադրության 125-րդ կետի պահանջներով

միաձայն

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Հայտարարել ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների մրցույթ:**

**2. Հաստատել ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների մրցույթի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:**

**3. Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝ սույն որոշման հրապարակման հաջորդ օրվանից հաշված տասներորդ օրը:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝  
**10 մարտի 2023թ.**  
**թիվ 6/16-Լ**  
**ք. Երևան**

Սիմոն Բաբայան